ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **20/12/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Ջիվան Մարգարյանը, Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը, Գևորգ Դավթյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը, Հայկ Հակոբյանը, Աննա Ավետիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Համիկ Ստեփանյանը, Երվանդ Եղիազարյանը, Արմեն Խաչատրյանը, Սուսաննա Սահակյանը, Դավիթ Մարգարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2719780.4 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «եկամուտների գծով՝ 2721335.4 հազար դրամ» բառերով և թվով.
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3599072.9 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «ծախսերի գծով՝ 3600627.9 հազար դրամ» բառերով և թվով.
   3) որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի.
   4) որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի.
   5) որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դավիթ Այվազյանը մանրամասը ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները: Փոփոխություններից մեկը այն էր, որ 18000000 ՀՀ դրամ հատկացվում է 1 հատ ինքնաթափ բեռնատար ձեռքբերելու՝ սանմաքրման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար, 4 հատ միկրոավտոբուսներ ձեռքբերելու համար հատկացվում է 72000000 ՀՀ դրամ:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ համայնքում տրանսպորտ չի աշխատում, բոլորը տեղյակ են, բնակիչների խնդրանքն է: Թվով 4 միկրոավտոբուս են ներառել, որ բնակիչները երկար չսպասեն, առավելագույնս 10 րոպե: Առայժմ լինելու է նախկին երթուղին՝ Ույծ բնակավայրից հիվանդանոց: Եթե արդարացնի, հետագայում տրանսպորտ կգործի նաև բնակավայրերում: Միկրոավտոբուսները լինելու են էլեկտրական, 17 տեղանոց, նկարահանող սարք է լինելու ներսում, որպեսզի բաժինը վերահսկի վարորդների աշխատանքը: Նոր ինքնաթափ բեռնատար ձեռքբերելու համար էլ զեկուցեց, որ հին մեքենաների ամորտիզացիոն ծախսը տարեկան կազմում է 3 միլիոն 800 հազ դրամ, դա խելամիտ չէ, որոշել են նորը գնել, այդ դեպքում տարեկան ծախսը կկրճատվի:
Վերջում Դ. Այվազյանը զեկուցեց, որ նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 1555000 ՀՀ դրամով: Համայնքում գործունեություն իրականացնող հանքերի՝ նախարարության հետ կնքված պայմանագրում նշված է մեկ կետ՝ որ համայնքում որ իրականացնում են գործունեությունը, տվյալ համայնքի դպրոցներին, նախադպրոցական ուսումնական հաստատություններին որոշակի գումար պետք է հատկացնեն: Այդ գումարը տարբեր հանքերի կողմից վճարվել է և ներառում են բյուջե:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղական տուրքերի գոտիավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2025 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2025 թվականի տեղական վճարների և արտոնությունների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Հ. Ստեփանյանը զեկուցեց, որ նախագիծը ուղարկվել է փորձաքննության և նախագծի վերաբերյալ տրվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը: Նշված դիտողություններն ու առաջարկությունները ուղղվել է: Հիմնական բազային օրենքը «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքն է, այնուհետև կառավարության որոշումը, որով որ կարգավորվում է համայնքի բոլոր բնակավայրերի գոտիավորումը և այդ գոտիների գործակիցները: Դրույքաչափերում փոփոխություններ չեն կատարվել: Ավագանին կարող է տարբեր դրույքաչափերի վրա կիրառել 1,5 գործակից, բայց համայնքը զերծ է մնացել, հաշվի առնելով բնակչության կենսամակարդակը և այլ գործոններ:

Հարցը դրեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով, հաշվի առնելով նախատեսվող համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի.
   1) եկամուտների գծով՝ 2529953.1 հազար դրամ,
   2) ծախսերի գծով՝ 2529953.1 հազար դրամ,
   3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:
2. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանել՝
   1) համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ.
   2) համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը զեկուցեց, որ 2025 թվականի բյուջեն կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքները և «ՀՀ 2025թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների չափը, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված հայտերը, անշարժ գույքի հարկի, տեղական տուրքերի և վճարների բազային ցուցանիշները: Բյուջեի նախագիծը նախքան ավագանու հաստատման ներկայացնելն անցկացվել է հանրային բաց լսում: Նա ներկայացրեց նաև 2025թ. բյուջեի եկամուտների ու ծախսերի պլանավորումը:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի փետրվարի 14-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար, քանի որ այս տարվա վերջին նիստն էր և շնորհավորեց բոլորին 2025 թվականի բյուջեն ընդունելու համար:

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____